



Ա Բ Ա Տ Ա Տ Ս

ԹԻՒԻ ԺՈ. — ԵՐԶԱԿԱՆ Ժ.Բ.

ՏՈՒՐԻ Ժ.Բ. — ՆՈՅԵԿԱ 1.

ԱՇԽԱՐԴԱՑ ՔՅ ՀԱՅԵԼԻՆ Է.

Աւր որ գալիս եմ, ամեն տեղ գանգատներ եմ լսում։ Մինն ասումէ կոտրած որտով թէ իւր պսակը անյաջող է պատահել, ամուսնական կեանքի մէջ ուրախութիւն չէ տեսնում, միւսը ախ է քաշում թէ պարտքի մէջ է խրված, երրորդը վէճեր ունի, որով զլուխը խառնված է ու անգաղար հոգս է անում, չորրորդը թէ զաւակներս լաւ չեն։ Եթէ որ կարելի լինէր տունից տուն, գիւղից գիւղ, քաղաքից քաղաք ման գալ, արդեօք մի ընտանիք կգտնէինք, որի մէջ կատարեալ ու անպակաս բաղդաւորութիւն և անզղաոր ուրախութիւն լինէր։ Կարելի է որ հազարաւոր մարդիկներին կպատահէինք, մինչև որ մինին գտնէինք, որ իւր սրտի խորքից մեղ ասէր թէ մենք կատարելապէս գոհ ենք, ամենելին գանգատի տեղ չունինք մեր ունեցած կեանքից։

Իսկ եթէ աշխարհիս մէջ ուրախութիւն ասած բանդ այսչափ քիչ է, և յայտնի ու ծածուկ ցաւերը այնչափ շատ, այլ ևս ի՞նչի ենք գովում ու փառաբանում Աստուծու բարութիւնն, Աստուծու իմաստութիւնը։ Միթէ բարութիւն է այս, որ մենք շատ տանջանքներով մի կեանք ու գոյութիւն ունինք, որի մէջ հազիւ ենք կարողանում մի օր բոլորովին անհոգս անց կացնել։ Միթէ իմաստութիւն է այս, որ մենք, տկար մարդիկս, աւելի չարիներով պիտի պատված պաշարված լինինք քան թէ բաղդաւորութիւն ու ուրախ օրեր տեսնենք։

Նրբ մարդիկների գանգատները քննումեմ զարմանալի բան է ինձ երեսում այն, որ շատ ու շատ մարդիկ ոչ թէ իսկ իւրեանց հանգամանքներիցն են անբաղդ, այլ նորանից, որ իւրեանց անկարդ ցանկութիւնները կատարել չեն

կարողանում։ Արուեստաւոր մարդը գանգատումէ իւր արուեստից, որ այն շափ շահ չէ բերում իւրեան, առաջվան նման չէ բանում, և աւելի բան չէ ցանկանում։ բայց միայն թէ իւր զրացու արուեստը ձեռք ձղել կարողանար որի մէջ լաւ ապրուսի ու հարստութեան ոսկի բղիսող մի աղբիւր է տես նում։ Բայց երբ նորա հարևանի մօտն են զնում, անիծումէ այն ժամը, որ այդ արուեստին է կպել, և համարձակ ասումէ։ որ իւր որդիների ոչ մէկին չի թողնի, որ այդ գործին ծառայէ, որովհետեւ այդ արուեստը բանեցնող ձեռը շատ է։ Կամ թէ մանումես լաւ վաճառականների սիրուն ու մեծ մեծ խանութները, տեսնումես։ որ լաց են լինում թէ ժամանակը վատացել է, առաջվան առուտուրները չկան։ Բայց կարելի է մի ուրիշը նոյն իսկ հանգամանքի մէջ և նոյն միջոցներում լաւ փող է աշխատում, միայն թէ իւր արած անխելք առուտուրովն և պահած անմիտ հաշուովն, իւր չափից միշտ գուրս գալով, վերջը սնանկութեան անդունդի բերանն է հասնում։ Կամ թէ երկու հոգի մի պաշտօնի ետեից են ընկնում, մինք ձեռը չէ ընկնում, ու տրտնջելով յետ է քաշվում խռոված։ մինչդեռ միւսը մի ժամանակ իւր ստացած նոր պաշտօնի մէջ մնալուց յետոյ, ծանրութեանը չէ զիմանում, ու իւր մի ժամանակն մրցանակցին է նախանձում ու երանի տալիս, որ իւր համար մի բաղդաւոր մասնաւոր ու առանձին կեանք է անց կացնում, զլուելը մէկ կողմ՝ քաշած։ — Այս ամեն զիպուածների մէջ, իսկը որ նայես, վիճակը չէ պատճառ, որ մենք գոհ ու շնորհակալ չենք, այլ մեր միտքն ու սիրտն, որովհետեւ այն մոքով, այն սրտովն ենք ընդունում մեր վիճակն, այն աչքովն ենք մեր զրութեան վերայ նայում։ Մեր վիճակն ու զրութիւնը դառնացնողը երբեմն մեր ընչասիրութիւնն է, երբեմն մեր պատուասիրութիւնն քիչով բաւականացող ուրիշ մի մարդ մեր տեղը շատ գոհ է ուրախ կարող էր լինել։

Ամեն մի մարդ աշխարհի վերայ իւր աչքովն է նայում։ Ինչ որ մինի համար անտանելի չարիք է երեւում, մի ուրիշի համար մի և նոյն րոպէին մի բարեյաջող բարիք ու բարերարութիւն կարող է լինել։ ինչ բանի վերայ որ մինք լաց է լինում, միւսը ուրախանումէ։ Ընդհանրապէս ասելով, շարիք ասած բանդ չկայ, մենք ենք մեզ համար չարիք հնարողը։ Եթէ որ իմ ասածս չես ընդունում, մի վիճակի, մի զրութեան անուն տուր ինձ, որի մասին ամեն մի տեսակ մարդիկ։ թէ պատանի, թէ տարիքն առած մարդ, թէ ունեոր թէ չունեօր, թէ անդէտ թէ զիտուն ու իմաստուն միաձայն ասեն թէ «այս վէճակը, այս դրսունէնը անսունժ չուրին է», սորանից ևս վատ վիճակ, վատ զրութիւն զժուար թէ լինի։ — Մինչև անգամ մահին ամենքի համար մի չարիք չէ, որովհետեւ որքան մարդ կայ, որ յօժար կամքով մահին է կամենում կամ ընտրում, որ ամօթից, խայտառակութենից ազատի։ Կան մարդիկ ևս, որոնց համար ամօթն ու խայտառակութիւնն անգամ մի մեծ չարիք չէ, միայն թէ աղքատ ու կարօտ չապրէին։ Աղքատութիւնն ևս մի չարիք չէ, որովհետեւ հաղարաւոր մարդիկ իւրեանց աղքատ տեղով աղքումեն ուրախ, առողջ, վերաներից ամենեին բան չէ ե-

ժեռում թէ նոցա կեանքը ծանր է, դժուար է, անտանելի է, Առողջութիւնը կորցնելն ևս մի չարիք չէ, որովհետեւ հիւանդներ ենք տեսնում, որ տարիներով իւրեանց անկողներից դուրս չեն դալիս, բայց և այնպէս ուրախ իւրեանց աչքերը դէպ ի երկինքն են ձգում իւրեանց ստեղծող Աստուծուն:

Եթէ որ դու աշխարհիս մէջ ամեն տեղ հարցնելու լինիս թէ ո՞րն է ուրեմն ամենից մեծ անբաղդութիւնն որ ամեն մի մարդ ևս վկայութիւն տայ թէ յիրաւի այս, այս է աշաւ, այն ժամանակ այնքան տեսակ պատասխաններ կստանաս, ինչպէս որ հազար ու մի կերպ պատասխաններ պիտի լսեիր, եթէ հարցնելու լինէիր թէ ամեն մի մարդ ի՞նչ բան արդեօք կհամարէր իւր ամենամեծ բաղզաւորութիւնը:

Այս ասածներից բաւական ուղիղ կերպով ու լաւ պէտք է հասկանանք, որ հարդիւներէ վիճակներն ու դրութիւններն, որ ունին իւրեանց կեանքի մէջ, ինչ վիճակի ու դրութեան որ Աստուած արժան է տեսել նոցա, որ լինին ու իւրեանց կեանքը վարեն այս աշխարհիս երեսը, իսկը որ նայես ամենի վիճակն ևս հաստատ լաւ է, ոչ թէ մինին լաւ, մի ուրիշնը վատ, որովհետեւ Աստուած ամեն մարդիկներին ևս բարի է կամենում և բարին պարզեւում, ինչի որ Ինքն է ստեղծել և իւր զաւակներն են. իւրեանք մարդիկը միմեանց հաստատ չեն, մարդիկ, որոնք Աստուծուց են ընդունում իւրեանց վիճակը, Աստուծու արարածը միշտ բարի է և մեր բարուն համար է, մարդն է իւր կողմից մէջը չարիք խառնողը. Վատ բանը մեղ վերայ դուրսից չէ զալիս: Աշխարհս իւր օրէնքներովն ու կարգերով միշտ նոյնն է մնում, մահկանացու մարզս է իւր խելքով ուրիշ կերպ տեսնողն ու համարողը և իւր տանջանքն ու նեղութիւնը աշխարհիս մէջ մտցնողը:

Ուրեմն, ով հողեղէն մարդ, ևս քո կեանքիցդ ունեցած զանդատներիցն հասկանումէմ, ոչ թէ մարդիս կեանքն ինչ է, այլ թէ դու ինքդ ինչ ես: Աշխարհս + + հայելին է. ինչ աչքով որ դու նորան նայումէս, ինքդ ևս նոյնպէս ես:

Աշխարհս + + հայելին է: Մանուկը վայր ընկնելով, վեր կենալով, պատեր բռնելով, իւրեան պահելով ման է զալիս անհօգ: Նորան ձմեռվան ձիւնն նոյնչափ ուրախացնումէ, որչափ որ նա ուրախանումէ գարնան զեղեցիկ ծաղիկները տեսնելով ամեն կողմը: Իւր անմեղութեամբ նա միամիտ միամիտ մօտենումէ: Թէ իւրեան ախորժ և թէ անախորժ երեկցած բանին: Նա իւր անմեղութեամբ ու անդիտութեամբ աշխարհիս վերայ այն աչքովն է նայում և այնպէս նորա մէջ շարժում: ինչ աչքով որ պէտքէ նայէր և ինչպէս որ նորա մէջ պիտի շարժէր իմաստուն մարզն և քրիստոնեայն: իւր հիմնական ու հաստատուն օրէնքներովն, որով ապրումէն այս աշխարհիս մէջ, երկուսն ևս, ինչպէս իմաստուն մարդը, նոյնպէս և մանուկն անցաւոր բանին սրտով չեն կալչում. մանուկն նորա համար, որովհետեւ զեռ ևս քիշ ցանկութիւններ ունի, իսկ իմաստուն մարզն, որովհետեւ չէ իմամենում, որ իւր ցանկութիւններն իւր վերայ իշխեն ու նոցա զերին գառնայ:

Սորա համար Քրիստոս Տէրն մեր այս խորին միտք ունեցող խօսքն ասաց. «Եթէ որ այս փոքր տղաներին նման չլինիք, երկնքի արբայութեանն արժանանալ չէք կարող»:

Աշխարհն ու հայելին է: — Տղան լաց է լինում, որովհետև վայր է ընկել ու իւր մի տեղը ցաւացրել. թող չգանգատվի թէ քարը կոշտ է, իւր անզգուշութենից իմանայ: Մեծացած մարզը տիրումէ, որ կորուստներ ունեցաւ, կամ թէ իւր յոյսերը զուր անցան, ամենեւին չկատարվեցան: Պյոտեր ամենավատ, ամենադառն թուած բանն ի՞նչ է, և հարկէ այն չէ, որ Աստուածային կամքովն ու կարգադրութեամբն մեջք մի բռնից կարօտ պէտք է մնանք, մի բանում պակասութիւն պիտի քաշենք, բայց բանն այն է, որ ինչ որ մեր ձեռին չէ, ինչ որ մեր ձեռից չի գայ, ինչ որ մեր կամքցածին հակառակ է լինում, այն բանին մենք ակամայ պէտք է յօժարանանք, ճար չկայ, թէեւ մեր սովորութիւններին ընդդէմ է, թէեւ մեր անձնասիրութեանը մի ազդու խրատ է, որ ծանր է դալիս մեր սրտին ու կոտրումէ մեր կեանքը: Ու թէ աշխարհիս մէջ կատարեալ բան չկայ, ու նորա համար ենք դանգատվում, այլ մեր անկատար լինելու վերայ ենք մէր գտնդատները անում: Ինքդ լաւ եղիր, ու որ կողմն ես որ շուր գոլու լինիս, ամեն բան լաւ կինիք քեզ համար ու գանգատի կամ դժգոհութեան տեղիք ամենեւին չես ունենայ:

Ասողներ կան թէ հողեղէն մարդիս այնպիսի անհայտ-նիւն ես կպատահի, որ է-ը հոգի չէ: Եւ յիրաւիք կան բաներ, որ մեղ ցտւ են դպաշառում: ու չենք կարող ինքներս մեր երեսին ասել թէ ինչ որ եղաւ, քա անխելքութեամբ եղաւ, պատճառն ինքդ ես: Բայց ի՞նչ պէտքէ ինքն իւրեան ասէ անմեղ մանուկն, որ վերան հիւանդութիւն գալու պատճառում: իւր անկողնի մէջ տապակիվումէ: Ի՞նչ պէտքէ ասէ իւրեան նա, որին անառողջ հայրն ու մայրը տկար ծնելուն պատճառն են եղել, կամ թէ նոցանից ժառանգել է նոցա թունաւորված ծուծերը: Ի՞նչ պէտքէ ասէ ինքն իւրեան արդար մարզը, որի զլիին խայտառակութիւն են բերել, բանտ են ձգելչարագործ մարդիկ, որոնք նորան զատաւորի ու զատաստանի առաջ են քաշել, կաշառք ուտող դատաւորների ձեռին մատնել, ու զուր տեղը քաշումէ այն պատիժը, որ առանց խղճմանը և անիրաւ տեղը իւր վերայ զրել են: Այնպիսի փորձանքներ շատ կան, որոնց մէջ ընկնողների սրտից արիւն են հանում ու աչքերից արտասուք զուր ու անիրաւ տեղը, որովհետև ամենեւին մի մեղք չունին այն պատիժը քաշողները: Բայց այս ամեն բանում սրտի ցաւի հետ միխթարութիւն ևս կայ թէ Աստուած այսպէս էր կամեցել ինձ, կերեկի նոր կամքն այսպէս էր, նորա խորհուրդներն անքննելի անիմանալի են. մի՞թէ կարող եմ ևս իմ՝ ստեղծող ու պահպանող Տիրոջ ասել, թէ ի՞նչի ինձ այսպէս կամքցար, որչափ ևս որ խելքս չհասնի, թէ որ մեղքիս համար տուաւ ինձ այդ փորձանքն կամ պատիժն: Բոլոր աշխարհիս մէջ եղած ու պատահած բաների միմեանց հետ ունեցած կազն, նոցա մէջ եղած օրէնքներն, նոցա ի՞նչ նպատակի համար լինելն ու պա-

տահելն ովկ կարող է խելք հասցնել, և ովկ կհամարձակի ու մտքից անց կկացնէ Աստուծու խորին խորհուրդներին խելք հասցնելու և իմանալու։ Եշխարհիս ստեղծվելու օրից սկսած, երբ որ ամեն բան սկսեց կեանք ու գոյութիւն ունենալ, այն օրից ոչ մի բան եղած չէ առանց նպատակի և Աստուծու նպատակներն ըորորդին համեմատ են իւր անշափ բարութեանն, որ իւր ստեղծած ամեն բաներիցն ևս այնպէս պարզ ու պայծառ երեսումէ, ինչպէս պայծառ արեգակն ենք տեսնում ամենքս։

Բայց պէտքէ ասենք, առանց մենք մեղ արդարացնելու, որ շատ ու շատ մեր դիմին եկած վատ բանի, — կամենումես անբաղդութիւն զիր անունը, կամենումես փորձանք, — պատճառն իսկ մնա+նաներս են+ ու էտ էտ մեր մերէցն է ւնում, թէև սովորութիւն ենք արել գանգատվելու, — Ահա այս է պատճառն, որ մենք սովորաբար աւելի ևս գանգատ ենք անումնաւ այն բաների մասին, որոնց յանցանքը մերն է, մեղաւորն ինքներս ենք պատճառ ըլունելու տեղ չունինք, Մարդիս բնութիւնն այնպէս է, որ մենք այն բանը, ինչ որ մեր մեղքով չէ պատահած մեղ, աւելի մեծահոգութեամբ, լայն սըրտով ու համբերութեամբ ենք տանում։ շատ անգամ կպատահի որ մինչեւ անգամ ուրախ ենք, որ քաշումենք զուր տեղը, մեղաւոր չլինելով և մինչեւ անգամ մի աղնիւ պարծանք ենք համարում մեղ համար։ — Այս հիւանդութիւնը, որի տէրն է եղել մի մարդ առանց իւր մեղքին, զիռ ևս չէ յուսահատեցրած նորան, բայց, այս շատ մարդ յուսահատել է նորա համար, որ իւր պատուասիրութեանն են կպել, շատ մարդ յուսահատել է իւր ժլատութեանը, ամբարտաւանութեանը և ուրիշ ուրիշ ժոլութիւնների պատճառով։ Որոշեալ հաւ-նի-նաները մեր հոգու հիւանդութիւնն շատ աւելի ծանր ու աւելի զդալի է քան թէ մարմնի հիւանդութիւնը, ինչպէս որ լինի։

Աշխարհն ու հայելն է։ — Դու ինձ մի ասա թէ ինչ աչքով ես նայում կամ ինչպէս ես զատում աշխարհիս վերայ, քեզ նման մարդիկների վերայ և քո իսկ զրութեանը վերայ, ու ես քեզ ասեմ թէ ինչ կիրքեր են քո մէջ ծածկված յօդվում։

Դու անբաղդ ես, որովհետեւ բերանիցդ գանգատ եմ լսում, բոյց քո մէջ է քեզ ծակօղ փուշը, որ քո վիճակդ քեզ համար վատ վիճակ է զառնում։ Քննիր ինքդ քեզ, ինքդ քեզ հարցրու, ինչի՞ համար ինքդ քո մէջ զոհ չես բոլորովին, ինչի՞ քո հանգամանքներիդ մէջ բաղդաւոր չես, ու զու կճանաչես ու կիմանաս քո հոգու հիւանդութիւնը, որի մէջ զտնվումես։ Կտեսնես ու կհասկանաս, որ քո ցաւերիդ սերմն քո շրջադարձումդ, քո հանգամանքներիցդ չէ, այլ քո սրտիդ խոր տեղերումն է։ Այնտեղ է վերդու լաւացրու։ Քրիստոս մեր Տիրոջ կրօնը տալիս է քեզ հոգուդ ցաւի ծարը։ Աստուած քո բարեբաղդութիւնդ է կամենում։ զու ես որ մինչեւ ցայժմ չես կամեցել, լաւ չմտածելով, այլ քո խելքովդ քո սրտիդ կամեցածն անպատճառ անել կամենալովդ այն տեղ ես բաղդաւորութիւն պտռել, ուր որ երբէք եղած չէ, ուր որ գտնելու տեղը չէ ամենեին։

Մէ իւսու ժայռն ասեմ քեզ, իմ հոգիս, միայն մի խօսք այնպիսի մի խօսք է, որ քեզ պէտքէ իրկէ: Ընդունիր ասածս, միտքը հասկացի՞ր: Այն ասածովս կլաւանան քո վերբերդ, դեպի լաւն կփոխվին քո հանգամանքներդ: Քո ճարն, քեզ հարկաւոր ճարն չուներածունեն: Է:

Զափաւոր եղիր քո բոլոր ցանկութիւններիդ մէջ. չափաւոր եղիր թէ սիրելուդ և թէ ատելուդ մէջ (չափով սիրի՞ր, չափով ատի՞ր). չափաւոր եղիր այն բանն վայելելու մէջ, որ քեզ ուրախութիւն է բերում. չափաւոր եղիր որ անցաւոր բանին ոչ շատ հաւանութիւն տաս և ոչ շատ չհաւանել ունենաս: ոչ շատ մեծ բան համարես, և ոչ շատ արհամարհես, կամ վատ ասես: Քո ամեն բանիդ մէջ չափ ունեցիր: անբաղդութիւնն ևս քո առաջեւ իւր չափը կունենայ:

Արքան որ աշխարհից քիչ բան ենք պահանջում, այնքան ևս մեր սրտի մէջ հարուստ ենք լինում: Ինչ որ մեր հոգու ու սրտի մէջն է, աշխարհս երրէք մեզանից խլել չէ կարող: Ի՞նչ բանի համար է աչքածակութիւնը, հոգի տալը փողի ետևից: Մեր վիճակովն, Աստուծու մեզ պարզեածովն գոհ լինելու ամենամեծ հարստութիւնն է: Ինչի՞ համար է մեր սիրու կրակ ընկնելը, որ ուրիշներից աւելի լինինք, բաժանվինք: Նշաններ ստանանք, փառքի տիրանանք: Առաքինութիւնն է յաւիտենական պատիւն, որին ոչ ոք չէ կարող կալչել: Ինչի՞ համար է հանգիստ կեանք պտռելը, փափուկ ապրել կամենալը, ամեն բանի առատութեան լիութեան մէջ լող տալ ցանկանալը: Մի թէ զու գերին լինել կամենումես քո այն մարմիդ, որ կարելի է մի տարի ևս անց չկենայ: որ գերեզմանի մէջ պէտքէ փոտի: Հայրդ է եղել թէ մայրդ, եղբայրդ կամ քոյրդ, զաւակներդ են եղել թէ սրտիդ սիրականները, ամենքն ևս մահկանացու են: Այս աշխարհումն մին մինից բաժանվելու օր կայ, դու այն օրը մոգիցդ մի՛ ձգեր, ով է իմանում, ում վերջին օրը երբ պէտքէ դայ, կարելի է նորա պիտի մեռնեն ու դու նոցա մահից յետոյ դեռ ևս պիտի ապրիս, կարելի է որ քո մահդ պիտի տեսնեն: Նոցա հոգին պէտքէ մնայ քեզ, ոչ թէ մարմինը: Առաջվանից սովորեցրու քեզ մոքիցդ անց կացնելը թէ կարող է մի օր պատահել, որ դու քո տարիդ սիրականին կորցրիր, և Տէր մի՛ արասցէն ելմէ մի օր արդարեւ զատահի ևս քեզ այդ բանը ինքդ քեզ բոլորովին չես կորցնի: Ընդ հակառակն այն ժամանակն ևս մսիթարված սրտով աշքերդ կձգես դէպի երկինքն մի քրիստոնէական ժամիտ երեսիդ ու կասես: Ի՞նչ է եղել ինձ որ, Աստուծած անմահ հողիների Հայրն չէ՞ մի և բոլոր աշխարհս մեր հայրական տունը չէ՞ արդեօք:

Չատ անգամ մի սուրբ զարմանք է տիրել ինձ, կարդացած ժամանակ սիրիստոս մեր Տիրոջ այն խօսքերը, որ ասել է իւր աշակերտներին, նոցանից բաժանվելու ժամին, իւր մահից առաջ. « ի՞ իսուսունենալ է՞ ուունի յել, է՞ իսուսունենալ է՞ իսուսուն յել. « ի ոյնուն է՞ ուունի յել, իսուսուն որ աշխարհն է ուունի՞: Եւ զարձեալ թէ: » Աշխարհիս մէջ նեղութիւն ունիք, բայց սիրտ առէք, ևս աշխարհին յաղթեցի: — Ի՞նչ ան-

համեմատ վսեմ ու գերաշխարհային աստուածային իմաստութիւն կայ նորա այս խօսքի մէջ, որ գնումեր սարսափելի չարչարանքներով լի մահի առաջը: Արդէն նա գիտէր Եւր աչքով տեսնելու մահն, որ առաջն էր, և որ պիտի ընդունէր Եւր արիւնը թափելով, բայց և արդէն այդ սոսկալի մահի զարհուրանքներին յաղթել էր նա Եւր սրտում, տրգէն նա իրեւ յաղթող կանգնած էր, մի լինելով Եւր Հօրն հետ, որ երկընքումն է, նա Եւր վերայ չե մտածում, այլ միայն իւր սրտին համար թափագին այն մարդիկների վերայ, որ երկրիս վերայ պէտքէ թողնէր, և կամենումէնոցա ևս մասնակից անել նշյալպէս, իրեւ մի ամենազնիւ ժառանգութեան, այն խաղաղութեանն, որ Ինքն պայծառացած կրումէր Եւր սրտի մէջ: Խոնարհութեամբ ու հեղութեամբ մտնումեմ ևս նորա աշակերտների մէջ և աչքերս գէպի վեր բարձրացրած, աղաջումնեմ ու խնդրում՝ նորան ասելով. Տէր, տուր և ինձ այդ խաղաղութիւնը, Աշխարհիս մէջ ևս ևս նեղութիւն ունիմ և ուրիշ տեղ օգնութիւն չեմ կարող գտնել, բայց միայն նորանից, որ յաղթել է աշխարհիու: Նա անտրտունջ տարաւ ամենազժուարին բանը, որ մարդիս զլինին կարող էր գալ, տարաւ հնագանգութեամբ, որովհետեւ այնպէս էր Եւր Հօր կամքը. Նա ժողովրդի կողմից Եւրեան առ աջարկած թագաւորական թազը արհամարհից փուշի պասկը ընդունելու համար, որովհետեւ այնպէս էր լաւը մարդկային ազդի փրկութեան համար. Նա հրաժարվեցաւ իւր կեանքի ամենայն ուրախութիւններից, և մտածումէր միայն իւր եղբայրների փրկութեանը համար: Ի՞նչ անպատմելի մեծութիւն է տեսնվում նորա թէ մտքի և թէ գործի մէջ, և ի՞նչ երկնային երջանկութեամբ պիտի լցվէր նորա սիրտն, երբ որ նու հոգին աւանդելու ժամանակը, իւր բերանից հանեց այն յաղթանակի խօսքն թէ ամենայն ինչ կատարեալ է:

Ես ևս ամենայն սիրով իմ Փրկչիս Ճանապարհով պէտքէ գնամ, պէտք է ևս հաւատի լաւ պատերազմն պատերազմն, քանի որ ողջ եմ, և ամեն իմ զլինիս եկած բաներում պէտքէ աղօթք անելով առեմ: Տէր, ինչ որ Քո կամքդ է իմ մասին, այն լինի. միայն թէ Քո խաղաղութիւնդ տուր ինձ:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԱՆՅՆՈՒՄԵՒ:

Երբ նա Երիքովին մօտենումէր, ճանապարհի վերայ նստած էր մի կըր մուրացկան, և լսելով որ իւր մօտով անցնումէր ժողովուրդը հարցրեց. այդ ի՞նչ է: Նորան ասացին որ «Յիսուս նազովրեցին անցնումէ (Ղուկ. ծը. 53—45):

Կըր էր. աչա ի՞նչ զրութեան մէջ էր գտնվում աղքատը նորա համար յիշատակելի այն օրը, երբ Յիսուս անցնումէր նորա մօտով. այսպէս է